

ԵՐԱԺՅՏԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐ. ՆԱՀԱՊԵՑՑԱՆՆԻ

Թիֆլիսը երաժշտական քաղաք է համարուում: Արդեօք այդ ճշմարիտ է: Ի՞՞մ կարծիքով ոչ կատարելապէս: Ի հարկէ, եթէ դատենք նրանից, որ համարեա ամեն մի տան մէջ կայ մի որ և իցէ երաժշտական գործիք, մանաւանդ դաշնամուր, այն ժամանակ կարելի է դալ այն եզրակացութեան, որ իբրև թէ թիֆլիսցիք սաստիկ երաժշտասէր են: Ես խորհուրդ կը տայի հետաքրքիր ընթերցողին անցնել գոնէ մի երկու շաբաթ ամեն երեկոյ այն տների մտտով, ուր գտնուած են տարաբախտ երաժշտական գործիքներ: Ես խորհուրդ կը տայի մինչև անգամ աւելի համարձակ մտնել այդ տների մէջ այն ժամին, երբ դաշնամուրի ծածկոցը բարձրացում է, ջութակները և ֆլէյտաները հանում են իրանց խուփերից և երբ սենեակի մթնոլորտը կամայ-ակամայ ստիպած է ընդունել այլևէ շարժումներ՝ իբր երաժշտական հնչիւններ: Ես միայն կը հարցնեմ նրան երկու շաբաթից յետոյ, թէ նա այդ ժամանակամիջոցում ի՞նչ է լսել:

Պատրաստ եմ գրազ գալ, որ նա կը պատասխանի ինձ այսպէս.

«Ես այնքան բաներ եմ լսել որ մինչև անգամ չեմ էլ յիշուի: հարիւրաւոր վալսեր և պոլկաներ, թշաւ Բեթհովենի գրեթէ բոլոր սոնատները, և Մոցարտին և Մենդելսոնի զանազան անբառ երգերը, և Շոպենի մազուրիաները և տեսակ-տեսակ դուէտներ ջութակի և դաշնամուրի համար, նման Բեթհովենի «Արեւցեքրովա սոնատային, և տրիօներ վիոլոնչելի համար և ուրիշ շատ ու շատ բաներ:

—Արդեօք այդ ամենը լմւ էր կատարում, կարելի էր հաճութեամբ լսել, կը հարցնէք դուք:

—Համարեա ամեն տեղ վատ, պարզասրտութեամբ կը պատասխանի նա:

Ճշմարիտ ասած, ես չար մարդ չեմ և չը կարծէք, թէ ես որ և է բանով ուզում եմ վիրաւորել հետաքրքիր և համարձակ ընթերցողի երաժշտական զգացումները՝ — որը անզգուշութիւն ունեցաւ հետեւել խորհրդիս. ոչ, եթէ ես սյսեցի խօսել մեր քաղաքի երաժշտականութեան մասին, այդ այն պատճառով էր, որ չորս կողմից ձեզ ուզում են համոզել իբր թէ Քիֆլիսը երաժշտական քաղաք է: Քիֆլիսում երաժշտութիւնը այն չափով են սիրում, որ չափով որ անկարելի է նրան չը սիրել. ոչ աւել և ոչ պակաս: Նուապում եմ աւելացնել, որ երաժշտութեան սիրոյ անւան տակ ես հասկանում եմ բացառապէս սէրը դէպի օպերան, որովհետեւ երաժշտութեան միւս ճիւղերը՝ ինչպէս են սիմֆոնիա, օրատորիա և աւհասարակ կամեր-երաժշտութիւնը Քիֆլիսցիներին ամենեւին դուրալի չէ: Ահա ձեզ սրա ապացոյցը. Քիֆլիսի երաժշտական ուսումնարանը տալիս է տարեկան երեք-չորսից ոչ աւելի քառաձայն երեկոներ, բաւական հետաքրքիր կազմեա՞ծ՝ մասնակցութեամբ տեղական ամենալաւ ոչժերի: Եւ ո՞վ է նրանց յաճախում: Ներկայ են գտնուում միայն նրանք, որոնք կարծես ստիպեա՞ծ են լինել. այսինքն ուսումնարանի աշակերտներ և աշակերտուհիներ, վարժապետներ և երկու-երեք կողմնակի անձինք: Միւսնոյն ուսումնարանը տարեկան երկու անգամ տալիս է համերգական (симфонические) երեկոներ չափազանց էժան գներով, ուր կատարում են կլասիկների ամենալաւ զբաւժները. Բեթհովենի, Մենդելսոնի, Շումանի սիմֆոնիաները, Բիզէյի սիւլիաները և ուրիշ նւագախմբական (оркестровые) զբաւժները դաշնամուրի կոնցերտներ երաժշտական համերգի հետ և այլն: Եւ դուք կարծում էք հասարակութիւնը ժողովւում է այդ երեկոյթներին: Ամենեւին. հասարակութիւնը բաւական սառնասիրտ է դէպի Բեթհովենի և ուրիշ հուշակաւոր երաժիշտների հեղինակութիւնները: Բայց ահա, երբ թատրոնական յայտարարութիւնների վրայ երևում էր ընդմեջ, այդ մաշեա՞ծ և կարելի է ասել երաժշտական տեսակէտից այդ անպատշա՞ծ օպերան՝ Քիֆլիսցիք՝ իրարից խլելով էին առնում տոմսակները:

Ինչո՞ւ համար:

Ի՞նչ կարծում էք նորա համար, որ այդ օպերան սիմֆոնիաներից աւելի մատչելի՞ է: Ի հարկէ, մասամբ և դորա համար, բայց զլիսաւորը նորանից էր որ նորմալում մասնակցու՞մ էր

Ճշաշանու Հասարակութիւնը նմանապէս բաւական եռանդով էր շարձախուժ էրնանի, նմանապէս հին և անկարելի մի օպերա, ոչ այնքան հէնց իրա օպերայի համար, որքան Ռուբինատտայի, որը այդ ժամանակ վերցնում է ահռելի նոտաներ:

Ես սկզբում ասացի, որ մեր հասարակութիւնը սիրում է բացառապէս օպերաներ: Այո, բայց դուք արդէն նկատեցիք, թէ ինչպէս է սիրում նա օպերան. նա ոչ իսկական երաժշտութիւնն է սիրում օպերայի մէջ, չկամ թէ նւադախմբի մասը օպերայի, այլ միայն երգեցողութիւնը, մինչև անգամ, եթէ ուզում էք, երգիչներին և երգչուհիներին:

Դուք կարծում էք ես ճշմարիտը չեմ ասում: Վերցրէք Լօէնգրին օպերան. ինչ հիանալի ներածութիւն (պրօլոգ) ունի նա. դա մի ամբողջ սիմֆոնիա է, դորա մէջ լաւում է ամբողջ օպերայի հոգին!

Բայց նորան ոչ ոք չէ լսում: Մեզանում՝ թատրոնում լաւութիւնը տիրում է վարադայի բարձրանալու բոպէից: Այդ դէպքում էլ ինչի համար են օպերաների ներածութիւնները. գուցէ հարցնէք դուք: Ահա ինչու համար. խօսմ չի կարելի միանգամից նստել տեղումը և սկսել լսել. թողէք մարդս առաջ իւր ծանօթների հետ մէկ բարեի և իւր հարեաններից առողջութեան մասին տեղեկանայ: Կամ երբ նւադապետը կը նստի իւր տեղումը և դուք կորիզորում զբօսնելիս նորա աջ ձեռքի չափաւոր շարժումներից կը հասկանաք, որ օպերան սկսեց, այն ժամանակ ամենահանգիստ կերպով կանցնէք դէպի ձեր տեղը և հէնց այդ բոպէին վարագոյրը կը բարձրանայ: Ահա ինչ առիթի համար են գրում օպերաների ներածութիւնները: Ել չեմ խօսում այն արիստոկրատների մասին, որոնք ընտրում են իրանց համար օպերայի մի որ և իցէ գործողութիւնը, գործրինակ ինչ պատճառով որ լինի՝ երրորդը. գայիս են ուղղակի այդ գործողութեան սկզբին և մնացածը թողնում են լսել պլէբէյներին: Միտս է եօթանասնական թւականներին այստեղ կար մի երգչուհի Լուէ (Այո) անունով: Չեմ կարող ասել, որ նա երաժշտականութեան մի որ և է մասում աչքի ընկնող լինէր, դորա փոխարէն սիրուն էր. սակայն այդ փակագծի մէջ: Եւ ահա, չը գիտեմ ինչու, թիֆլիսցիք վճռեցին, որ նա ամենից լաւ է լինում Րիզոբատտո (արդէն բաւական հնացած) օպերայում: Եւ երբ ներկայացնում

էին Ռիզոլետտո Լուէի մասնակցութեամբ, արդէն առաջուց կարելի էր իմանալ, որ կասապում ոչ մի տոնայի չի մնալ: Ամբողջ թաւրոնը ծախահարում էր. բայց այդ դեռ բոլորը չէ: Կային այն ժամանակ երկու-երեք առանձին զնահատողներ, որոնք երևում էին նորա համար միայն, որ լսեն օրիորդի ձայնի կլկլոցը երկրորդ գործողութիւնում: Այդ կլկլոցը ականում է մէկ բոպէից ոչ աւելի և այդ ժամանակ նւազախումքը լոււմ է: Ամենքը զարմանում էին այդ առանձին զնահատողների ահագին երաժշտականութեան վրայ: Կային ի հարկէ և սիեպախներ:

Սա միշտ վշտանում և նեղանում եմ երբ Զառուսի, Լօէնդրինի, Աիդայի, Տանհելզերի և ուրիշ լաւ օպերաների ներածութիւնները բոլորովին իզուր են անցնում հասարակութեան համար: Բայց ինչ որ աւելի վատն է, այդ նա է, որ և մենք, ներածութիւն լսել ցանկացողներս, չենք կարողանում լսել, որովհետեւ բարձրաձայն խօսակցութիւնները դա՛հլիճում և մանաւանդ օթեակներում ամենեւին թող չեն տալիս լսելու օպերայի նւազախմբային մասերը:

Օպերայի ներածութիւնը և նւազախմբային կտորներ չը լսելը՝ հաւասար է զնալ մի անծանօթ դրամայի, բաց թողած լինելով առաջի գործողութիւնից 10 բոպէ, պարտաւորեալ սրայմանով չը հետեւել դրամային նաև միւս գործողութիւններում՝ նոյնքան ժամանակամիջոց և ոչ աւելի: Աէ որ այդ վայրենի կը թուէր: Բայց ինչ է օպերան եթէ ոչ երաժշտութեան փոխադրած դրամա, կամ այլապէս ասած՝ երաժշտական դրամա: Եթէ դրամայում ոչ մի տեղ չի կարելի բաց թողնել, որովհետեւ այլապէս չես ունենալ մի ամբողջ գաղափար նորա գործողութեան մասին, ապա ինչպէս բաց թողնել օպերայի ներածութեան հետ նաև մի քանի ուրիշ մասեր: Բանն էլ հէնց՝ դորանում է, որ մեզանում՝ Թիֆլիսում՝ սովոր չեն օպերայում տեսնել մի ամբողջութիւն: Մեծամասնութիւնը մեզանից նայում է օպերային իբրև մի շարք բոհանների, իբար մէջ բացի հեղինակից ու ինչ կապ շունցողներու: Եւ դրա համար շատ հասկանալի է, որ մենք կարող ենք մէկ եղանակին առաւելութիւն տալ միւսի առաջ և լսել միայն մեր սիրած արիանները, բոլոր մնացածները բաց թողնելով:

Սակայն ես զխաւոր նպատակից մի քիչ հեռացայ: Սա ուզում

էի խօսել երաժշտութեան մասին Թիֆլիսում և թէ ինչպէս է նա գնահատուում մեզ մօտ: Ես արդէն խօսեցի Թիֆլիսցիներէ սիրոյ մասին դէպի երաժշտութիւնը. ինձ մնում է ասել, թէ մենք ներկայ սեզոնում ինչ երաժշտութիւն ունէինք:

Այս ձեւմարանական տարում Թիֆլիսում եղել են երկու քառերգ երեկոներ երաժշտական ուսումնարանում և մէկ համերգ երեկոյթ արքունական թատրոնում: Բայց ես արդէն վերը ասացի, որ Թիֆլիսում երաժշտութիւն ասելով մեծ մասամբ հասկացուում է օպերա Դժբախտաբար, մենք այս սեզոնում օպերա ամենեւին չունէինք: Այսինք, ոչ խալաւ, որովհետեւ օպերա չիշեցնող մի բան եղել է... Բանը նրանումն է, որ Արախտական ընկերութիւնը կապալով վերցնելով արքունական թատրոնը չորս տարով չալտնի օժանդակութեամբ, վերջումը (այս վերջի սեզոնումը) այլ ևս ոյժ չունեցաւ օպերային ներկայումներ տալու և այդ պատճառով վճռեց ներկայացնել ուսւ դրամաներ, բայց այն պայմանով, որ եթէ ով և իցէ կամենայ մասնաւոր կերպով օպերաներ տալ՝ քաջալերել նրանց և օգնել այսինքն աւելորդ ծախսեր չանել տալ:

Ներկայ սեզոնի սկզբում Թիֆլիս եկան երեք հայ երգիչներ. Աֆրիկեան, Նդիազարեան և Մադաթեան, երկու առաջինները մի կոնցերտ տալու և այնուհետեւ գնալու նպատակով: Այնպէս պատահեց, որ հասարակութեանը դուր եկաւ նրանց երգեցողութիւնը և ահա երաժշտական ուսումնարանի վերատեսչի և Թիֆլիսի օպերային մշտական նւագապետի պ. Իպպոլիտով-Իվանովի գլխումը միտք ծագեց նրանց մասնակցութեամբ տալ մի քանի օպերաներ, ի հարկէ պատշաճ կրճատումներով մի ամբողջ նւագախումբ և երգեցիկ խումբ չունենալու պատճառով: Ներկայացուեց «Պատուտ» օպերան. հասարակութիւնը շտապեց այդ ներկայացումին: Ի հարկէ ներածութիւնը սովորութեան համեմատ համարեա ոչով չը լսեց. չորրորդ գործողութեան առաջի պատկերի սկիզբը, որտեղ եկեղեցում, բեմի ետևից երգեհոն է նւագում, նմանապէս անուշադիր էր թողւած, մի խօսքով դէպի ոչ ձայնաւոր մասերը հասարակութիւնը վերաբերեց իւր սովորութեան համեմատ բաւական անգթաբար, բայց դորս փոխարէն հափշտակութեամբ էր լսում երգիչներին և երգչուհիներին: Լրջութեամբ դատելով ինչ ասել կուզի, որ միայն տիկին Չարուհնայա —

Մարգարիտայի դերում—արժանի էր կատարեալ համակրութեան. մնացածները՝ Մաղաթեանը—Յառուստի դերում, Եղիազարեանը—Մէֆիստոֆէլի դերում, յայտնի տեղակ ան անշնորհք երգիչ Յրանկովսկին—Վալէնտինի, ոչ անյայտ Ալմազովան—Ջիբէլի դերում դուր եկան հասարակութեանը միայն այն պատճառով, որ նա (հասարակութիւնը) վաղուց է որ ոչ մի օպերա չէր լսել, Եթէ այլապիսի ջիբր. քով և նոյնպիսի կրճատումներով ներկայացուէր «Յառուստ» թէկուզ հէնց անցեալ տարի, չնայած որ անցեալ տարուց օպերային խումբն էլ մի շատ հիանալին չէր, մեր հասարակութիւնը ոչ թէ կը սկսէր շլացնել. բայց շատ աւելի մեծ սառնասրտութեամբ կը վերաբերէր. Բայց Թիֆլիսը սովորած լինելով—ծարաւել էր օպերային և դորա համար շատ ներողամիտ էր:

«Յառուստ»-ից յետոյ ներկայացուեց «Բիզոլէտտո» Աֆրիկեանի և Ռչէուլովայի մասնակցութեամբ, յետոյ Եվգենիյ Մեկզին: Այդ երկու օպերաներն էլ կատարուեցան բաւական ներողամտաբար, այսինքն, ներողութիւն, ես ուզում էի ասել, որ հասարակութիւնը բոլոր ժամանակ ներողամիտ էր մնում: Բայց մեր հասարակութեան աւելի երաժշտական մասի մէջ սկսում էր կամաց-կամաց բողոք բարձրանալ: Հասարակութիւնը աւելի պահանջող կը դառնար, ինչ անցեալ տարիներին: Բայց բարեբախտաբար այնպէս պատահեց, որ այդ օպերաներին կառավարող պ. Իսպոլիտով Իվանովը ստիպւած եղաւ միաժամանակ հեռանալ Թիֆլիսից և օպերաներն էլ իրանք իրանց դադարեցին: Ճշմարիտ է մի ժամանակ խօսում էին որ այդ ներկայացուցիչները չեն դադարելու և պիտի կառավարեն կամ նորեկ պ. Էզմալեան կամ պարոն Էնգէլ որը՝ օպերէաների կառավարողն էր անցեալ ամառ Պուշկինեան Այգում կազմակերպւած: Բայց այդ լուրը չ'արդարացաւ, և օպերային ներկայացուցիչներն դադարեցան: Յանկարծ առաջ ընկաւ ամենքին յայտնի պարոն Վանդերիկ, առաջարկելով օպերաներ կազմել մասնակցութեամբ տիկ. Յլաշա-Վանդերիկի: Դա դեկտեմբերի կէսին էր: Առաջին ներկայացուած օպերան էր «Արդան» պարոն Էնգելի կառավարութեամբ և մասնակցութեամբ Յրանկովսկու, Ալմազովի, Կորինէի, պարոն և տիկին Վանդերիկների: Իւր ժամանակին տեղական լրագիրներում այդ «Արդայի» քննութիւնը երեւացւոյ էլ ինչ ասել կուզի, որ ներկայացումը շատ վատ էր, այնքան վատ, ինչքան թիֆլիսցիները Տուրովի և

Սիէնի արտօնատէրութիւնից յետոյ առկթ չին ունեցել տեսնելու: Աւելորդ չեմ համարում այստեղ մի քանի խօսք ասել հէնց իրա Վանդերիկի՝ մեր հասարակութեան սիրելիի մասին: Ճշմարիտ, զարմանալի է մեր հասարակութիւնը: Գուք զիտէք, թէ ինչով է նա դուր գալիս հասարակութեանը. նրա համար որ կարողանում է բարձր նոտաներ վերցնել. զօրօրինակ՝ զօ կամ զօդիէզ: Բայց իսկապէս, երաժշտական տեսակետից ինչէ՛ ներկայացնում պարօն Վանդերիկը: Դա ամենաանշորհ երաժիշտն է, այսինքն երաժշտական ընդունակութիւններից բոլորովին զուրկ մի մարդ: Քանի տարի է արդէն, որ նա մասնակցում է մեր օպերայում և երբէք ես չեմ լսել նորա երգեցողութիւնը, նա չը գիտէ երգել, նա չը գիտէ թէ ինչ բան է երգեցողութիւնը, ներդաշնակութիւնը: Երբ նա ստիպւած է միջակ, ոչ բարձր նոտաներ վերցնել, նորա ձայնը ամենևին չի լսում: Նա կարծում է, որ օպերաները գրւում են միայն բարձր նոտաների համար, որտեղ կարելի է մի լաւ ըղաւել: Այժմ տեսնենք, թէ ի՞նչպէս է նա վերցնում նոյն իսկ բարձր նոտաները:

Նորա վերցրած բարձր նոտաները բաւական դուրեկան են, թէև մի քիչ աղաղակող բնաւորութիւն ունին: Բայց նա գրեթէ երբէք չի տիրապետում իւր ձայնին, նա միշտ խուլում է, այո, միշտ՝ նա կոկորդացաւ ունի: Այժմ հարցնող լինի, թէ՛ նրա ո՞ր լաւ և գրաւիչ կողմերի համար սիրում է նրան Թիֆլիսի հասարակութիւնը: Միմիայն նրա համար, որ երբ պատահմամբ նա իւր ձայնի տէրն է լինում և կարողանում է մաքուր կերպով վերցնել բարձր նոտաներ՝ հասարակութեան հրճանքը հաւնում է իւր գազաթնակէտին: Այնեքե և, որ Վանդերիկի գնահատութեան մէջ տեղ չէ բռնում երաժշտութիւնը. նա շլացնում է միայն իւր արտակարգ բնածին կոկորդի հիւանդոտ ձայնով: Այսպիսի վերաբերմունք դէպի երաժշտութիւնը և մասնաւորապէս դէպի երգչի ձայնը, նշանակում է երգեցողութիւնը համարել ֆոկլուս:

Այդպիսի վերաբերմունք կարելի է թոյլ տալ միայն դէպի կրկէսի մարմնամարզները: Արդալի վերջին ներկայացման ժամանակ Վանդերիկի ձայնը Ռադամեսի դերում, ըստ սովորականին, տեղումը չէր. նա խուլում էր և մեծ մասամբ լուում: Պարօն Աորիձէն, այդ հակաերաժշտական պարօնը, յետ չը մնալու համար, խուլում էր նմա-

պէս: Բայց այս բոլորը տանելի կը լինէր, եթէ չը գտնուէին մարդիկ, որոնք յափշտակութեամբ ծափահարում էին Վանդերիկին, և նա դուրս էր դալիս, գլուխ տալիս իւր շնորհակալութիւնը յայտնելով հասարակութեան՝ իրա ձայնի և տաղանդի արժանաւոր գնահատութեան համար: Ֆրաչան լաւ էր Արդայի դերում: Այնպիսի շատերին զարմացրեց Ամերիսի դերը բաւականի յաջող կատարելով, իսկ մի քանի կտորներում մինչև անգամ բաւականի երաժշտական կերպով: Բայց այդ երկու տիկիներն էլ տեղ-տեղ սխալ էին երգում:

Այնուհետև մեր օպերան միանգամայն լսեց. տւանկնք՝ ի՞նչ կունենանք զալ սեզոնը: Ատուած մի արասցէ որ այս գործին զլուխ անցնի նորից մեր Արտիստիկական ընկերութիւնը: